ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 11/2026/Վ/Վ

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 26 մայիսի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արմեն Մարուխյանի, Արամայիս Փաշինյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի մայիսի 19-ին Հանձնաժողով մուտքագրված քաղաքացի Ավետիք Չալաբյանի դիմումը (այսուհետ՝ Դիմում),

ՊԱՐԶԵՑ

1.Ըստ Դիմումով ներկայացված տեղեկատվության՝

1.1 Դիմումով վկայակոչվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ, 5-րդ, 25-րդ, 27.1-ին և 28-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց

տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 36-37-րդ, 61-62-րդ կետերը և նշվել է, որ 2026 թվականի մայիսի 18-ին, հանդես գալով նախընտրական քարոզարշավի ընթացքում, Նիկոլ Փաշինյանը, դիմելով քաղաքացի Արփինե Սողոյանին, ուղղակիորեն խախտելով քաղաքական զսպվածության բոլոր հնարավոր սահմանները, կատարել է հետևյալ արտահայտությունները. «Եթե դուք Ռոբն եք, մենք Ձեզ կզացնելու ենք», «Ռոբին էլ եմ կզացնելու, Կալուգացուն էլ եմ կզացնելու, Գագոյին էլ եմ կզացնելու, Սերժին էլ եմ կզացնելու:»:

1.2 Դիմումի համաձայն՝ նշված արտահայտություններին քաղաքացին պատասխանել է, որ ինքը Ռոբ չէ, ինքը հայ է, ինչին ի պատասխան՝ Ն.Փաշինյանը նշել է. «Ռոբը նստելու ա, Ռոբին սատկացնելու եմ, Կալուգացուն էլ եմ սատկացնելու:»: Ըստ Դիմումի՝ ապա, կրկին դիմելով իրեն մոտեցած քաղաքացի Սողոյանին, Նիկոլ Փաշինյանը հայտարարել է. «Դուք եք կզել, դուք եք, որ փախել եք»: Այնուհետև Ն.Փաշինյանը քաշքշել է վերջինիս թևից՝ պահանջելու կանգ առնել և շարունակել է խոսել, որին ի պատասխան՝ քաղաքացին հայտնել է՝ մոռացի իրանց, սակայն Նիկոլ Փաշինյանը շարունակել է, դիմողի գնահատմամբ, անվայելուչ հայտարարությունները քաղաքական ուժերի առաջնորդների հասցեին:

1.3 Դիմումով նշվել է, որ քաղաքացին հարցրել է՝ ութ տարի ի՞նչ էիք անում, սակայն Նիկոլ Փաշինյանը շարունակել է վիրավորական արտահայտություններ կատարելը թե տվյալ քաղաքացու, թե քաղաքական ուժերի հասցեին՝ սպառնալով իր արտահայտություններով «չոքացնել» և իրեն թույլ տալով այլ անթույլատրելի արտահայտությունները: Որպես նշվածի ապացույց՝ Դիմումով ներկայացվել է «YouTube» սոցիալական ցանցի՝ «24TV» ալիքով 2026 թվականի մայիսի 18-ին հրապարակված՝ «Քաղաքացին շշպռեց Փաշինյանին. «Գողացել եք հայրենիքս, մի ողջ երիտասարդ սերունդ եք ոչնչացրել»» վերտառությամբ տեսանյութի հղումը[1]:

1.4 Դիմումի համաձայն՝ վերոգրյալից հետո, ելույթ ունենալով ավտոմեքենայի վրա, Նիկոլ Փաշինյանը, հնչեցնելով բազմաթիվ վիրավորական

[1] Հասանելի՝ https://www.youtube.com/watch?v=4KmmEDC0hbw

արտահայտություններ, վերջում հավելել է, որ դրանք ուղղված են Ռոբին, Սերժին, Կալուգացուն և Գագոյին: Նշվածին ի հավաստումն՝ Դիմումով ներկայացվել է «YouTube» սոցիալական ցանցի՝ «24TV» ալիքով 2026 թվականի մայիսի 18-ին հրապարակված՝ «Փաշինյանը լարվեց և կրկին սպառնաց ընդդիմությանը. «Նորից մի զույգ բոթասի մակարդակի եք հասնելու»» վերտառությամբ տեսանյութի հղումը[2]:

1.5 Դիմումի համաձայն՝ նույն օրը, պատասխանելով լրագրողի հարցին, Նիկոլ Փաշինյանը հայտարարել է. «Ես Ռոբիկին սպառնացել եմ ու հիմա էլ եմ սպառնում, սպառնում եմ, ասում եմ՝ սատկացնելու եմ:»: Դիմումով նշվել է, որ ակնհայտ է, որ Նիկոլ Փաշինյանը նկատի ունի ՀՀ երկրորդ նախագահին, Սամվել Կարապետյանին, ում Ն.Փաշինյանն իր հրապարակային արտահայտություններում նշում է որպես Կալուգացի, Գագիկ Ծառուկյանին և ՀՀ երրորդ նախագահին: Նշվածի ապացուցման համար՝ Դիմումով ներկայացվել է «168.am» լրատվական կայքի՝ 2026 թվականի մայիսի 18-ի՝ «Այո, ֆիզիկական սպառնալիք ա, պոլերին ենք տալու, սատկացնելու ենք. Փաշինյանը չի հանդարտվում» վերտառությամբ հրապարակման հղումը[3]:

1.6 Դիմումով նշվել է, որ նման անթույլատրելի արտահայտություններով, խախտելով զսպվածության ու քաղաքական անաչառության սկզբունքները, Նիկոլ Փաշինյանը վիրավորել է նախևառաջ քաղաքացուն, ինչպես նաև բացահայտ սպառնացել է վկայակոչված քաղաքական ուժերին և նրանց ղեկավարներին, ինչն ակնհայտորեն դուրս է կարծիքի արտահայտման ազատության սահմանադրական իրավունքի շրջանակներից և կոպտորեն խախտում է Կանոնագիրքն ու «Հանրային ծառայության մասին» օրենքը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածը, դրա 2-րդ կետով սահմանված՝ քաղաքական խոսքի սահմանափակման ծավալը:

1.7 Դիմումի համաձայն՝ նման արտահայտություններով վիրավորանք է հասցվել թե կոնկրետ քաղաքացուն, թե մի շարք քաղաքական ուժերի ու նրանց ղեկավարների, ընդ որում՝ օգտագործված արտահայտությունները որևէ կերպ չեն

---

[2] Հասանելի՝ https://www.youtube.com/watch?v=r4IJ7-I-OsQ
[3] Հասանելի՝ https://168.am/2026/05/18/2414593.html

կարող համարվել ընդունելի և կիրառելի, որևէ պարագայում չեն կարող համարվել քաղաքական և թույլատրելի խոսույթ, քաղաքական խիստ կամ քաղաքականապես կտրուկ բովանդակություն կամ քննադատության որևէ թույլատրելի դրսևորում, քանի որ իրենց մեջ պարունակում են գռեհիկ ու վիրավորական սպառնալիքներ, անթույլատրելի բառամթերք, հատում են ազատ խոսքի ու քաղաքական խոսույթի թույլատրելի բոլոր սահմանները՝ ի հակադրումն գործող նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների:

1.8 Դիմումով ներկայացվել են վարքագծի կանոնների խախտման վարույթ հարուցելու և Ն.Փաշինյանի հրապարակային խոսքում վարքագծի կանոնների խախտման առկայությունն արձանագրելու պահանջներ:

2. Հրապարակված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում վեր հանված փաստական տվյալները և վարույթի հարուցումը մերժելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

2.1 Հանրապետության նախագահի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ ՆՀ-200-Ա հրամանագրով Նիկոլ Փաշինյանը նշանակվել է ՀՀ վարչապետ և պաշտոնավարում է մինչ օրս:

2.2 Դիմումով ներկայացված՝ «YouTube» սոցիալական ցանցի՝ «24TV» ալիքով 2026 թվականի մայիսի 18-ին հրապարակված՝ «Քաղաքացին շշպռեց Փաշինյանին. «Գողացել եք հայրենիքս, մի ողջ երիտասարդ սերունդ եք ոչնչացրել»» վերտառությամբ տեսանյութի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ տեսանյութի 00:05 րոպեին քաղաքացին մոտենում է ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանին և նշում.

«Բարև Ձեզ: Բարև Ձեզ: Եկել եմ Ձեզ ողջույնի խոսք ասեմ: Էն, ինչը որ պետք ա ասեմ, բազմիցս Դուք լսել եք, բայց ես Աստծուն շնորհակալ եմ, որ հնարավորություն ընձեռնվեց այսքան մոտիկ տարածությունից նայեմ Ձեր աչքերի մեջ և ասեմ, որ Դուք գողացել եք իմ հայրենիքը (Ն.Փաշինյանն արձագանքում է՝ *ո՞րն ա Ձեր հայրենիքը): Դուք իմ… Դուք գողացել եք իմ հայրենիքը, Դուք շարունակում եք գողանալ իմ հայրենիքը* (Ն.Փաշինյանը հարցնում է՝ *ինչո՞վ,* մեկ այլ անձ փորձում է ընդհատել, նշում՝

պարոն վարչապետ, Ն.Փաշինյանն արձագանքում է՝ *թողեք, թողեք, թողեք): Մի րոպե՛* (մեկ այլ անձ հարցնում է՝ *ի՞նչ մի րոպե,* Ն.Փաշինյանը նշում է՝ *թողեք, հանգիստ), մի րոպե: Դուք, Դուք, իմ ազգի մի ամբողջ երիտասարդ սերունդ եք ոչնչացրել, Դուք, Դուք* (մեկ այլ անձ արձագանքում է՝ *էսօր սաղ էդ թեմայից են խոսում, զադանյա են ստացել): Լավ եմ արել, ես իմ սրտի խոսքն եմ… Դուք գողացել եք իմ երեխեքին, Դուք գողացել եք իմ եղբորը* (Ն.Փաշինյանը հարցնում է՝ *Ձեր ո՞ր երեխային եմ գողացել), Դուք իմ եղբորն եք գողացել* (Ն.Փաշինյանն արձագանքում է՝ *ո՞նց եմ գողացել): Դուք գողացել եք իմ ուրախությունը: Ձեր հարցին ես հիմա հարցով պատասխանեմ* (Ն.Փաշինյանը նշում է՝ պատասխանեք): *Դուք գիտե՞ք՝ քանի բարձր սպա… բարձրաստիճան սպա, բարձրաստիճան սպա* (որոշ ներկաներ արձագանքում են, հստակ չի լսվում, Ն.Փաշինյանը նշում է՝ *թողեք, թողեք) բռնի անհետացած և կամ անհետ կորած բարձրաստիճան սպա ունեք, քանի՞ հատ ունեք* (Ն.Փաշինյանը պատասխանում է՝ *197 անձ անհետ կորած ա,* զուգահեռ լսվում է ներկա քաղաքացիներից մեկի արձագանքը՝ *Քոչարյանն ա ուղարկել): Սուտ եք ասում: Անհետ կորած քանի բարձրաստիճան, ես ասում եմ* (Ն.Փաշինյանն արձագանքում է՝ *կոռեկտ արտահայտվեք, կոռեկտ արտահայտվեք)՝ քանի բարձրաստիճան սպա ունեք բռնի անհետացած* (Ն.Փաշինյանն արձագանքում է՝ *ընդհանուր բռնի անհետացածների թիվը 197 ա): Բարձրաստիճան սպա եմ ասում* (Ն.Փաշինյանն արձագանքում է՝ *ինձ համար բարձրաստիճան, ցածրաստիճան կապ չունի): Դուք չգիտեք, Դուք, Դուք փորձեցիք մեզ կոտորել* (Ն.Փաշինյանն արձագանքում է՝ *ու՞մ Ձեզ կոտորել): Դուք մեզ կոտորել եք* (լսվում են ներկաների ձայները, որոնք հասկանալի չեն, երկու հոգի դիպչում են քաղաքացու ձեռքերին): *Ձայնդ, մի րոպե՛, մի րոպե՛* (Ն.Փաշինյանը դիմում է ներկաներին՝ *հանգիստ, հանգիստ, հանգիստ): Մի րոպե՛, ապահովեք Դուք, ապահովեք* (բառը հստակ լսելի չէ) (Ն.Փաշինյանը պատասխանում է՝ *ապահովում եմ, ասեք): Ուրեմն Դուք փորձեցիք մեզ կզացնել, մենք չենք կզել* (Ն.Փաշինյանն ընդհատում է՝ *Դուք նախ կներկայանա՞ք, Դուք կներկայանա՞ք):»:*

Ներկաները սկսում են գոչել՝ *Նիկոլ՝ վարչապետ, Նիկոլ՝ վարչապետ,* ինչի արդյունքում Ն.Փաշինյանի և քաղաքացու միջև երկխոսության որոշ հատվածներ լսելի չեն: Քաղաքացին նշում է. *«Ասում եմ* (հստակ լսելի չէ), *բժշկական գիտությունների*

թեկնածու, ես ներկայացա (հստակ լսելի չէ):»: Ն.Փաշինյանը պատասխանում է. *«Բժշկական գիտությունների թեկնածու, որտե՞ղ եք աշխատում: Որտե՞ղ եք աշխատում* (քաղաքացին արձագանքում է՝ *որտեղ որ աշխատում եմ,* (հստակ լսելի չէ): *Չէ, ասեք՝ որտեղ եք աշխատում: Մենք առողջության ապահովագրություն ենք ստեղծել, մենք պետություն ենք ստեղծել, ուրեմն, լսեք, լսեք* (քաղաքացին արձագանքում է՝ *Դուք պետությունը քանդում եք): Ի՞նչն եմ քանդում:»:*

Քաղաքացին պատասխանում է. *«Ուրեմն, Դուք, Դուք մեզ փորձեցիք կզացնել, մենք չենք կզել:»:*

Ն.Փաշինյանն արձագանքում է. *«Դուք ո՞վ եք* (քաղաքացին պատասխանում է՝ *հայ ազգը): Եթե դուք Ռոբն եք, մենք ձեզ կզացնելու ենք* (քաղաքացին արձագանքում է՝ *չեք կզացնելու): Եթե դուք Ռոբն եք, Ռոբին էլ եմ կզացնելու, կալուգացուն էլ եմ կզացնելու, Գագոյին էլ եմ կզացնելու, Սերժին էլ եմ կզացնելու: Եթե դուք Ռոբն եք, Ռոբին կզացնելու եմ, Ռոբին կզացնելու եմ, հիմա եմ անելու, կզացրել եմ և կզացնելու եմ* (քաղաքացին ամբողջ ընթացքում արձագանքում է, հիմնական մասը լսելի չէ, ի թիվս այլնի, նշում է՝ *8 տարի ա անեիր): Եթե դուք Ռոբն եք, Ռոբին կզացրել եմ ու կզացնելու եմ* (քաղաքացին արձագանքում է՝ *ես Ռոբ չեմ, ես հայ եմ, ես հայ եմ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ, իմացա՞ք): Ես հայ եմ, հայը էսօր պետություն ունի, Հայաստանի Հանրապետության քաղաքացուն ձեր Ռոբը գնդակահարել ա, գնդակահարել ա* (քաղաքացին արձագանքում է՝ *դու ես գնդակահարել, դու, դու, միայն դու): Ես չեմ գնդակահարել, ես հայ եմ, ինձ ձեր ասած… Ռոբը, դուք, դուք, դուք* (քաղաքացին արձագանքում է՝ *եթե էս երկրում, լռեք մի րոպե): Ես բավարար չափով Ձեզ լսեցի* (քաղաքացին պատասխանում է՝ *լռի, ես եմ խոսում), բավարար չափով Ձեզ լսեցի* (քաղաքացին նշում է՝ *եթե էս երկրում կան կզած մարդիկ, դա դու ես և քո ոհմակը): Ուրեմն, եթե դուք Ռոբն եք, Ռոբին կզացնելու եմ, Ռոբը նստելու ա, Ռոբին սատկացնելու եմ, կալուգացուն էլ եմ սատկացնելու* (քաղաքացին արձագանքում է, մի մասը լսելի չէ, լսելի է հետևյալը. *թուրքի առաջ կզածը դուք եք,* զուգահեռ լսվում է ենթադրաբար Տ.Ավինյանի ձայնը՝ *տիկին, տիկին): Դուք եք կզել, դուք եք կզել, փախել եք, փախել եք:»:*

Քաղաքացին նշում է՝ *ափում եմ Ձեզ, ափում եմ, անիծվեք Դուք,* այնուհետև փորձում է հեռանալ, սակայն Ն.Փաշինյանը քաշում է նրա ձեռքից, նշում. *«Հլը մի րոպե,*

արի, մի րոպե, մի գնա: Ռոբը, Սերժը և մյուսները, ովքեր, ովքեր (քաղաքացին արձագանքում է, հստակ լսելի չէ, լսելի է «ձեռքերդ» բառը), *մի րոպե, հանգիստ, լսեք, ես Ձեզ լսեցի, Դուք էլ ինձ լսեք: Ես Ձեզ լսեցի: Ուրեմն, էն մասկեքով, որ Ղարաբաղի ակցենտով խոսում են* (քաղաքացին ընդհատում է՝ *լսի, դու մոռացի իրանց), դրանք փախածներն են, փախածները, Ֆերրարի ֆորսաժով փախել են պատերազմին, մեր երեխեքին էլ լքել են, մեր երեխեքին էլ լքել են, լքել են: Ռոբին էլ եմ կզացնելու, Սերժին էլ եմ կզացնելու, կալուգացուն էլ եմ կզացնելու, Գագոյին էլ* (քաղաքացին զուգահեռաբար նշում է. *«Ուրեմն լսի, ութ տարի ա, ութ տարի ա վարչապետ ես, մի լավ բան անեիր, ութ տարի ա հնարավորություն ունեիր, անեիր, ի՞նչ ես արել:»): Էսա կասեմ, առողջության ապահովագրություն, թոշակ, բնակարան* (քաղաքացին արձագանքում է՝ *առողջության ապահովագրությունը իմ հաշվին ես արել), մի միլիարդ, մի միլիարդ, մի միլիարդ…»:*

Քաղաքացին արձագանքում է. *«Ես քո հետ խոսալու չունեմ* (Ն.Փաշինյանը պատասխանում է՝ *բա ինչի՞ եք եկել), ես եկա՝ ասեմ, որ ատում եմ քեզ, դու թշնամի ես, դու թշնամի ես: Ութ տարի ա լսում եմ ես Ձեզ:»:* Զուգահեռաբար Ն.Փաշինյանը նշում է. *«Ո՛չ, կանգնեք, կանգնեք, պիտի լսեք, ես* (հստակ չի լսվում), *կանգնեք և լսեք, կանգնեք և ես ասում եմ: Էն Ղարաբաղի, Ղարաբաղի ակցենտով, մի րոպե* (քաղաքացին նշում է՝ *ես հարց չեմ տվել, ես իմ հոգունն եմ ասում), էն Ղարաբաղի ակցենտով, լսի, լսեք, ես Ղարաբաղի ակցենտով, որ մասկեքով…»:* Զուգահեռաբար Տ.Ավինյանը և քաղաքացին վիճաբանում են, Ն.Փաշինյանն ընդհատում է. *«Մի րոպե սպասեք, մի րոպե, ասում եմ՝ Ռոբիդ կզացնելու եմ, Ռոբիդ կզացնելու եմ, չոքցնելու եմ, սատկացնելու եմ, կալուգացուն էլ եմ կզացնելու, սատկացնելու եմ, չոքացնելու եմ* (քաղաքացին նշում է՝ *լսի, ութ տարի ա, ութ տարի ա ինչո՞վ էիր զբաղված, այ ողորմելիներ): Ողորմելին դուք եք* (քաղաքացին նշում է՝ *ութ տարի, ութ տարի ի՞նչ էիք անում): Երկիր էինք սարքում, պետություն էինք սարքում:»:*

Քաղաքացին պատասխանում է. *«Քանդել ես, քանդել ես երկիրը:»:* Ն.Փաշինյանը նշում է. *«Դուք եք քանդել, Դուք եք քանդել: Ղարաբաղով, Ղարաբաղով թալանել եք:»:* Քաղաքացին հեռանում է, Ն.Փաշինյանը շարունակում է խոսքը՝ դիմելով տեսանկարահանող սարքին. *«Եվ ես ասում եմ՝ էն Ղարաբաղի ակցենտով*

մասկավորվածները, որ բան են տարածում, վիդեո… Դուք փախած լակոտներ եք, հանեք ձեր մասկեքը հլը, հանեք ձեր մասկեքը, այ սրահակներ, այ փախածներ, այ, այ մեր երեխեքին հակառակորդի առաջ մենակ… Ղարաբաղի ակցենտով մասկեքով վիդեո են տարածում: Ասում ենք՝ դուք վախկոտ համբալներ եք, ովքեր փախել են մարտադաշտից: Հանեք ձեր մասկեքը, հանեք ձեր մասկեքը, Ռոբի լակոտներ, Սերժի լակոտներ, Գագոյի լակոտներ, կալու… չոքցնելու եմ սաղիդ: Հատ-հատ մասկեքներդ կոխելու եմ համապատասխան տեղերը, իմացեք:»:

2.3 Դիմումով ներկայացված՝ «YouTube» սոցիալական ցանցի՝ «24TV» ալիքով 2026 թվականի մայիսի 18-ին հրապարակված՝ «Փաշինյանը լարվեց և կրկին սպառնաց ընդդիմությանը. «Նորից մի զույգ բոթասի մակարդակի եք հասնելու»» վերտառությամբ տեսանյութի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ տեսանյութում Ն.Փաշինյանը, ելույթ ունենալով, նշում է հետևյալը.

«Ժողովուրդ ջան, ես նախ ուզում եմ բոլորիդ շնորհավորել, որովհետև էսօր զուգարանում մարդ չի սպանվելու: Մենք համբերատար և լսում եմ՝ ով գալիս ա, ինչ ա ասում, բայց ես համաձայն չեմ, որ իրանց ասելիքը ասեն ու թողեն, փախնեն: Տենց չի: Մենք ձեր ասելիքը լսում ենք, դուք էլ մեր ասելիքը պիտի լսեք: Երեկ ինձ ցույց են տալիս՝ չորս հոգի Ղարաբաղի ակցենտով խոսում են, սենց մասկեքով, թե մեր հայրենիքը, որ մեր ձեռից առել ա: Էդ մասկեքով սրահակներին ես ասում եմ՝ ձեր մասկեքը, այ համբալներ, դուք մեր երեխեքին դիրքերում մենակ թողել եք, փախել, տրականքներ, սրահակներ, ես ձեր մասկեքը հանելու եմ ու ձեր մասկեքը մտցնելու եմ ձեր համապատասխան տեղերը, համբալի լակոտներ: Ռոբերտ, քեզ եմ ասում, Սերժ, քեզ եմ ասում, կալուգացի, քեզ եմ ասում, Գագո, քեզ եմ ասում: Մի հատ կամերայի դեմից էն կողմ գնացեք: Պատկերացնու՞մ եք, դրանց լկտիության աստիճանը. մասկեքը հագել են, ինչ-որ, ոնց որ ավտոմատ էլ կար ձեռներները (ներկաներից մեկը արձագանքում է՝ խուժանները): Ղարաբաղի… Հը՞ (ներկաներից մեկը կրկնում է՝ խուժաններն են, խուժանները): Ղարաբաղի ակցենտով էլ՝ (խոսում է իբրև բարբառով) ով որ մեր հայրենիքը մեր ձեռից առել ա, մենք… Արա, այ համբալներ: Դուք, Ֆերրարիի արագությամբ փախել եք, արա: Դուք ով եք, արա, որ կարաք գաք, խոսաք: Դուք ով եք, արա, այ սրահակներ: Հանեք ձեր մասկեքը, ես ձեզ մասկեքով էլ սատկացնելու եմ

հերթով, որ մեր երեխեքին… Դուք մեզ գաք ասեք, որ մենք մեր երեխեքին զո՞հ ենք տվել: Դուք եք, արա, փախել, դիրքերում փախնողներ, մենք հատ-հատ ձեզ ծնկի ենք բերելու, պատասխանատվության ենք բերելու մեր երեխեքին մենակ թողելու և փախնելու համար (ներկաներն արձագանքում են՝ այո՛): Եվ հիմա էլ գաք, ասեք՝ 5000 զոհ, 5000 զոհ: Էդ տենց էիք հաշվել, հա՞: Տենց էիք հաշվել, որ էնքան պիտի փախնեք, մեկ էլ 2023 թվին ասեք՝ Նիկոլը սահմանները փակել ա, որ Ղարաբաղի ժողովուրդը չկարենա՞ դուրս գա: Դուք Ղարաբաղի ժողովրդին էլ եք ստրկացրած պահել: Էս որ սենց ուղարկում են, գան, երկրի վարչապետի դեմը խոսան: Ինչի, Ղարաբաղում կարային մի հատ վարչության պետի տեղակալի դեմը մեկը կանգներ, երկու բառ նախադասություն անե՞ր: Գլխից կկրակեին Ստեփանակերտի կենտրոնում: Գլխից կկրակեին (ներկաներն արձագանքում են՝ այո՛): Դուք հիմա էլ եկել եք, ուզում եք Ղարաբաղի ժողովրդի նման Հայաստանի ժողովրդին ստրկացնե՞ք: Գլուխներդ պատին եք տվել: Հատ-հատ, մասկեքներդ հանելու եմ և մտցնելու եմ ձեր համապատասխան տեղերը: Հատ-հատ, Ռոբից սկսած: Ռոբն էլ կարա էսօրվանից մասկա հագնի, Սերժն էլ, կալուգացին էլ, Գագոն էլ: Մասկա հագեք: Որովհետև դուք երազելու եք Հայաստանից փախնելու հնարավորության մասին, դուք չեք փախնելու, դուք չոքելու եք Հայաստանի ժողովրդի առաջ և պատասխան եք տալու Հայաստանը իբր Ղարաբաղի անվան տակ, իբր Ղարաբաղի համար ծախելու համար: Ղարաբաղը դուք էն գլխից եք ծախած եղել, ձեզ համար Ղարաբաղի ժողովուրդը պատանդ ա եղել, Ղարաբաղը պատանդ ա եղել, որ Հայաստանը էդ ծխածածկույթի տակ թալանեք: Եվ մենք էսօր էդ թալանածը հետ ենք բերել և մինչև վերջ հետ ենք բերելու: Ռոբիկ, Սերժիկ և մյուսներ: Ոնց 90-ականների թվին մի զույգ բոթասով եղել եք, տենց էլ ես ձեզ հասցնելու եմ մի զույգ բոթասի մակարդակի, մի զույգ բոթասի մակարդակի:»:

2.4 Դիմումով ներկայացված՝ «168.am» լրատվական կայքի՝ 2026 թվականի մայիսի 18-ի՝ «Այո, ֆիզիկական սպառնալիք ա, պոլերին ենք տալու, սատկացնելու ենք. Փաշինյանը չի հանդարտվում» վերտառությամբ հրապարակման ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ հրապարակմամբ ներկայացված տեսանյութում մի լրագրող Ն.Փաշինյանին հարցնում է. «Դա սպառնալի՞ք է՝ ընդդիմությանը ուղղված:»:

Ի պատասխան՝ Ն.Փաշինյանը նշում է. *«Քանի որ, քանի որ ընդդիմության ներկայացուցիչները ձեզ հայտնի գործերով հանցանքների ակնհայտ մասնակիցներ են, այո, ես ասում եմ, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և որպես ժողովրդի մանդատ ունեցող մարդ՝ ես կոնկրետ անձանց սպառնում եմ, որ նրանք նստելու են և պետք ա նստեն:»:*

Լրագրողը հարցնում է. *«Ինչու՞ այս տարիների ընթացքում (հստակ չի լսվում) տեղի չունեցավ:»:*

Ն.Փաշինյանը պատասխանում է. *«Տեղի ա ունեցել:»:*

Մեկ այլ լրագրող հարցնում է. *«Այսինքն, բայց ֆիզիկական սպառնալիք չէ՞ր* (Ն.Փաշինյանը նշում է՝ *չէ, չէ*) *նաև էդ որ ասում եք՝ կմտցնեմ համապատասխան տեղերը:»:*

Ն.Փաշինյանը պատասխանում է. *«Էդ, էդ, էդ ֆիզիկական սպառնալիք կարա ըլնի էն մասկեքով ելույթ ունեցողներին: Այո, ֆիզիկական սպառնալիք ա, որովհետև պոլերով ենք տալու դրանց, սարկացնելու ենք (լրագրողն արձագանքում է, սակայն արձագանքը հստակ լսելի չէ): Ոչինչ, դրանից հետո իրավապահները գնահատական կտան: Ես ասում եմ՝ էդ ով որ մասկեքով, ավտոմատը ուսներին դրած խոսում են, ես դրանց հատ-հատ գտնելու եմ ու սարկացնելու եմ՝ բառիս իրավական…:»:*

Լրագրողը հարցնում է. *«Ուզում եմ հասկանալ՝ դա ֆիզիկապես ո՞նց եք պատկերացնում»:*

Ն.Փաշինյանը նշում է. *«Մեր իրավապահները ասֆալտ ուտցնելով իրանց տանելու են, գցեն քրեակատարողական հիմնարկ:»:*

Մեկ այլ լրագրող հարցնում է. *«Ինչու՞ այս ութ տարիների ընթացքում դա չեղավ»:*

Ն.Փաշինյանը պատասխանում է. *«Դա եղել ա, բազմիցս ա եղել և տարբեր դրվագներով ա եղել: Ես ասում եմ՝ մենք գործ ենք ունեցել 23 գլխանի հրեշի հետ, գլուխները կտրելով՝ եկել ենք հերթով, հիմա մնացել են վերջին 3 գլուխը և հիմա առաջիկա մինչև տարվա վերջ պիտի դա տեղի ունենա, մինչև տարվա վերջ:»:*

Լրագրողներից մեկը հարցնում է. *«Բա որ անցան խորհրդարան, ի՞նչ եք անելու: Կամ իշխանություն ձևավորեցին:»:*

Ն.Փաշինյանը պատասխանում է. *«Ինչի խորհրդարան… Իշխանություն ձևավորեն, ժողովուրդը ոնց կորոշի: Ժողովուրդը ոնց կորոշի: Ժողովուրդը կորոշի՝ տենց ա, ուրեմն ես…»:*

Լրագրողը հարցնում է. *«Պարոն Փաշինյան, էս խոսույթը, որ սենց ձևավորվել ա ձեր, ընդդիմադիրների միջև, նոր պարոն Սիմոնյանին էլ էի հարցնում՝ նորմա՞լ ա, հարի՞ր ա բանավեճի տեսանկյունից, կամ Ձեր տեսանկյունից, օրինակ, հայ տղամադրուն հարի՞ր է կնոջ հետ այդպես խոսել, էդպես սպառնալիքներով, կամ ղեկավարին:»:*

Ն.Փաշինյանն արձագանքում է. *«Ի՞նչ եմ խոսել: Ես կնոջը չեմ սպառնացել, ես Ռոբիկին եմ սպառնացել ու հիմա էլ եմ սպառնում: Սպառնում եմ: Սպառնում եմ: Ասում եմ՝ սատկացնելու եմ: Սատկացնելու եմ:»:*

Մեկ այլ լրագրող հարցնում է. *«Բայց, պարոն Փաշինյան, ամեն դեպքում Դուք կնոջ հետ էիք խոսում, վարչապետին հարի՞ր է:»:*

Ն.Փաշինյանն արձագանքում է. *«Լսեք: Ամեն, ամեն դեպքում կինն էլ վարչապետի հետ էր խոսում, եթե կինը, կինը իրան հաշիվ չի տալիս* (լրագրողը նշում է՝ *բայց պատերազմի* (շարունակությունը հստակ չի լսվում)), *որ խոսում ա Հայաստանի Հանրապետության ժողովրդի ներկայացուցչի հետ, ուրեմն ես էլ իրա, իրա տերերի հետ խոսում եմ, ու սպառնում եմ ու ասում եմ* (մեկ այլ լրագրող արձագանքում է՝ *հարազատ է կորցրել պատերազմում): Գիտեք ի՞նչ: Իմ, իմ հարազատը, իմ հարազատը, իմ, ես իմ ընտանիքը չեմ խնայել, հա: Ով որ մտածում ա, որ ավելի շատ բան ա տվել, շատ իզուր: Ես իմ ընտանիքը չեմ խնայել: Ես իմ ընտանիքը չեմ խնայել* (լրագրողն արձագանքում է՝ *բայց շատերը հազարներով զոհեր են տվել, վիրավորվել են): Լսեք, լսեք, ասում եմ՝ ես իմ ընտանիքը չեմ խնայել: Ես չեմ որոշել, որ իմ ընտանիքը չի զոհվելու: Ես ձեզ հարյուր անգամ ասել եմ՝ իմ տղայի հետ նույն խրամատում գտնվող մարդը զոհվել ա, այ սենց իրար կպած են եղել, զոհվել ա: Ես չեմ որոշել, որ իմ տղան պիտի չզոհվեր: Եվ ես իմ ընտանիքը չեմ խնայել, ես ոչ մի բան չեմ խնայել, և ասում եմ՝ էն մարդիկ, էդ… էլի ասում եմ՝ մետրոյում դեպքը ուրիշ կերպ մեկնաբանվեց, բայց ասում եմ՝ նրանք, ովքեր գալիս են, ստեղ Ղարաբաղի ակցենտով սպառնալիքներ են ձևակերպում, դրանք բոլորը փախածներ են, փախածներ, ճողոպրածներ, վախկոտ ստահակներ են դրանք*

բոլորը: Վախկոտ սպահակներ: Ինչ պագոն ուզում ա ունենան վրեն: Էդ վախկոտ սպահակներից մի մասը հիմի դատվում ա, ու նրանք էլ պիտի դատվեն, նստեն: Ու էն դատական մաֆիաները, որ նրանց անընդհատ ազատ են արձակում, անընդհատ ազատ են արձակում, էդ որ բարձրունքներ են տվել, էդ որ դիրքեր են տվել, որ ինձ մեղադրեն, որ իշխանափոխություն անե՞ն: Գլուխները պատին… Հատ-հատ:»:

Լրագրողներից մեկը հարցնում է. *«Բա վեթթինգ եք արել, դատարանները, ինչու՞ եք մինչև հիմա դեռ իրենց մեղադրում, որ…»:*

Ն.Փաշինյանը պատասխանում է. *«Չենք արել վեթթինգ, որովհետև Սահմանադրությունը թույլ չի տվել, դրա համար էլ ասում ենք՝ Սահմանադրությունը պիտի փոխվի և բոլոր դատավորների կարգավիճակը պիտի դառնա դատավորի…»:*

Մեկ այլ լրագրող հարցնում է. *«Պարոն Փաշինյան, էդ մետրոյի խոսույթի համար Դուք չե՞ք զղջում, որ հիմա ասում եք (շարունակությունը հստակ լսելի չէ):»:*

Ն.Փաշինյանը պատասխանում է. *«Ես մետրոյի խոսույթի համար զղջում եմ, որ, զղջում եմ, որ ես երեխայի ներկայությամբ էդ խոսույթը ունեցա և էդ փիկնոջ հետ խոսեցի… Չնայած հետո պարզվեց՝ էդ կինը, ըստ էության, էդ քրեաօլիգարխիկ կլանի ընտանիքի անդամ ա, բայց ես կնոջից ներողություն… Ես բոլոր կանանցից ներողություն եմ խնդրում, բայց ասում եմ՝ սիրելի կանայք, ասում եք՝ բա, հաշիվ չե՞ք տալիս, որ կնոջ հետ եք… Կինը հաշիվ չի՞ տալիս, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ ա խոսում: Ինքը Ղարաբաղի որևէ, ասենք, պետի տեղակալի տեղակալի տեղակալի տեղակալի հետ կարա՞ տենց խոսա: Կտանեին, կսատկացնեին: Կտանեին, Պողոս Պողոսյան կա… հերիք եղավ, բոլ եղավ:»:*

Լրագրողներից մեկը նշում է. *«Այսօր Ձեզ մոտեցած կինը Արցախից չէր, պարոն Փաշինյան, Երևանի բնակիչ էր:»:*

Ն.Փաշինյանն արձագանքում է. *«Դե, Հայաստանում, որտեղի բնակիչ ուզում ա լինի, ուրեմն թող իրան հաշիվ տա, որ խոսում ա Հայաստանի վարչապետի հետ:»:*

Մեկ այլ լրագրող հարցնում է. *«ՔՊ-ի էթիկայի կանոնագրքի խախտում չէ՞ր Ձեր* (հստակ չի լսվում)*:»:*

Ն.Փաշինյանը պատասխանում է. *«ՔՊ-ն թող իմ հարցը քննի և միջոցներ ձեռնարկի:»:*

Մեկ այլ լրագրող Ն.ՓԱշինյանին հարց է ուղղում, որը հստակ լսելի չէ և որին ի պատասխան՝ Ն.Փաշինյանը նշում է. *«Մտնում ա, նրանք, ովքեր ուզում են ժողովրդավարությունը ուզում են օգտագործեն ժողովրդավարության դեմ, ես իրանց սպառնում եմ, սպառնում եմ: Ասում եմ՝ կալուգացի օլիգարխին, Ծառուկյան Գագոյին, Քոչարյան Ռոբերտին, ոտերի տակ ընկնող Սերժին սպառնում եմ կոնկրետ, սպառնում եմ, ասում եմ՝ ես ձեզ սատկացնելու եմ ու ծնկի եմ բերելու: Ես ձեզ կզցնելու եմ:»:*

2.5 «Pastinfo.am» լրատվական կայքի՝ 2026 թվականի մայիսի 14-ի՝ «Կզած մարդը ատում է չկզածներին, ոչ թե իրեն կզացնողներին. Ռոբերտ Քոչարյան» վերտառությամբ հրապարակման[4] ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ հրապարակմամբ ներկայացված տեսանյութում ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հանդես է գալիս ելույթով և տեսանյութի 04:57 րոպեին նշում է հետևյալը.

«Գիտեք, մի, մի, մի արտահայտություն կա, ես ուղղակի մինչև այստեղ գալը հիշեցի՝ կզացած մարդը ավելի շատ ատում է ոչ թե նրան, ով իրան կզցրել ա, ատում է նրանց, ով չի կզացել (ներկաներն արձագանքում են՝ *այո): Եվ դրա համար ա այդ մարդը* (նկատի ունի Նիկոլ Փաշինյանին) *ատում մինչև այսօր բոլոր պայքարող կերպարներին: Բոլորին: Սա մի բարդույթ է, որը խորը նստած է մարդու մեջ, ենթադրում եմ, որ ի ծնե, ուղղակի տեսակ է և այդ տեսակը այսօր առաջնորդում է Հայաստանի Հանրապետությունը: Խայտառակություն է: Հիմա ի՞նչ անել այս ամեն ինչի հետ: Երևի գիտեք: Նայեք, լկտիությունը հասել է նրան, որ այսօր հարվածում է մեր ինքնությանը: Ես չեմ հիշում Հայաստանի պատմության մեջ, որ որևէ մեկը համարձակվի խոսել ինքնության դեմ, խոսել եկեղեցու դեմ: Ըստ էության, ինքն… ի՞նչ է ինքնությունը: Սա ինչ-որ, ինչ-որ բաներ է, որոնց շնորհիվ, սենց համակցված այդ ամենը, մեզ հայ ա դարձնում: Որ մենք ասում ենք՝ մենք հայ ենք, որովհետև պատկանում ենք Հայ Առաքելական Եկեղեցու, որովհետև ծնվել ենք այստեղ, ապրում ենք այստեղ, Արարատն ենք տեսնում և այլն, և այլն: Հիմա սա է ինքնությունը: Հիմա, այ համբալ, ի՞նչ ունես դրա հետ:»:*

[4] Հասանելի՝ https://pastinfo.am/hy/videos/2026/05/14/202020/237038

2.6 Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների ուսումնասիրությամբ[5] Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն թվականի մայիսի 18-ին համացանցում տեսանյութ է հրապարակվել, որում դիմակավորված անձինք ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հասցեին հնչեցնում են հետևյալ խոսքը.

*«Ու մենք սօրվա յիրա իրանք պղծում են մեր գերեզմանները, մեր եկեղեցիները, մեր հողն ու ջուրը, դրան հետե, Նիկոլ, դու պատասխան ես տալու, մենք գիտում ենք դու շտեղով ես ման կյամ, վեր փողոցներով ես անցկենում, մենք քեզ ճարելու ենք, Նիկոլ, դու սուկա ես, դու խաբեբա ես, դու հունցը խաբալըս Արցախի ժողովրդին, եկալըս Արցախի, Ստեփանակերտի հրապարակում կանգնալ խաբալ, ասալ վեր Արցախը Հայաստան ա: Ու սօր էլ խաբալ, ասում ես Հայաստանը անկախ ա, դու խաբում ես, Հայաստանը անկախ չի, դու Հայաստանն էլ ես օգում հանձնես Ադրբեջանի կազմ: Դու խաբեբա ես, դու (*խլացված է*): Մունք քեզ, նորից եմ կրկնում, ճարելու ենք, մունք գիդում ենք՝ տու շտեղըս քինյամ, շտեղովըս քինյամ, նորից եմ կրկնում: Դրա հետի, դու ամեն մի քայլիդ հետի պատասխան պիտի տաս մեր հայ ժողովրդի առջև:»:*

2.7 ՀՀ վարչապետի՝ 2026 թվականի մայիսի 7-ի թիվ 417-Ա որոշման համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին 2026 թվականի մայիսի 8-ից մինչև 27-ը ներառյալ և մայիսի 29-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ տրամադրվել է արձակուրդ:

2.8 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:»:

2.9 Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Պետական քաղաքական պաշտոններն են (...) վարչապետի (...) պաշտոնները, (...) :»:

---

[5] Տես «civilnet.am» լրատվական կայքի՝ 2026 թվականի մայիսի 18-ի՝ «Դիմակավորված անձինք սպառնում են գտնել Փաշինյանին» վարչապետն էլ սպառնում է «չոքցնել» նրանց» վերտառությամբ հրապարակումը, հասանելի՝ https://civilnet.am/hy/news/1011892 և «YouTube» սոցիալական ցանցի «Armlur TV» ալիքի՝ 2026 թվականի մայիսի 18-ի՝ «Նիկոլ, դու պատասխան ես տալու, գիտենք, դու շտեղով ես ման կյամ. ինչ տեսանյութի մասին էր ասում Փաշինյանը» վերտառությամբ տեսանյութը, հասանելի՝ https://www.youtube.com/watch?v=cAdsaeTprnQ

2.10 Օրենքի 25-րդ հոդվածով նախատեսվում է բարեկրթության և հարգալիրության սկզբունքը և սահմանվում է.

«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսևորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսևորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս:»:

2.11 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(…)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները:

(…)»:

2.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարույթ կարող է հարուցվել՝

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա, իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի դիմումի հիման վրա.

(…)

2. Հանձնաժողովը (…) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան

համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ: Սույն մասի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա:

(...)»:

2.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 30-րդ հոդվածի համաձայն.

«1. Դիմումը վերադարձնելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին Հանձնաժողովն ընդունում է որոշում դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

(...)

3. Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝

1) դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.

(...)

4. Սույն հոդվածով նախատեսված որոշումները եռօրյա ժամկետում ուղարկվում են դիմողին:»:

2.14 Կանոնագրքի 1-ին կետի համաձայն.

1. (...) կանոնագիրքը վարքագծի կանոնների ամբողջություն է, որով պետք է առաջնորդվեն հանրային պաշտոն զբաղեցնող անձինք:»:

2.15 Կանոնագրքի 36-րդ կետի համաձայն.

«36. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս՝ ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն:»:

2.16 Կանոնագրքի 37-րդ կետի համաձայն.

«37. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը:»:

2.17 Կանոնագրքի 61-62-րդ կետերի համաձայն.

«61. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների քաղաքական չեզոքություն և քաղաքական զսպվածություն դրսևորելու օրենսդրական պարտականությունը և չպահանջել նրանցից գործել դրա շրջանակներից դուրս:

62. Հանրային պաշտոն զբաղեցող անձը պարտավոր է ընտրությունների ժամանակ պահպանել նախընտրական քարոզչության, ներառյալ՝ քաղաքական գովազդին օրենքով ներկայացվող սահմանափակումները և պահանջները, ինչպես նաև՝ չօգտագործել հանրային ռեսուրսները, օրենքով նախատեսված վարչական ռեսուրսներն իր, այլ անձանց կամ քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի համար, չներգրավել այլ հանրային պաշտոն զբաղեցող անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների՝ օգտագործելու իրենց աշխատանքային ժամերը կամ այլ ռեսուրսները այդ նպատակի համար:»:

Հանձնաժողովը նախ անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Դիմումով ներկայացված պահանջները վերաբերում են ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի կողմից սույն որոշման 2.2-րդ կետում ներկայացված վիճաբանության շրջանակներում քաղաքացուն վիրավորելուն, ինչպես նաև վիճաբանության ընթացքում և դրան հաջորդած միջադեպերի ընթացքում քաղաքական հակառակորդներին վիրավորելուն, վերջիններիս հասցեին սպառնալիքներ հնչեցնելուն: Ըստ այդմ, **Հանձնաժողովը սույն որոշմամբ սահմանափակված է՝ գնահատելու միայն Դիմումով ներկայացված պահանջների շրջանակներում վարույթի հարուցման հարցը և չի կարող քննարկել սույն որոշման 2.2-2.4-րդ կետերում ներկայացված՝ Ն.Փաշինյանի խոսքը Դիմումի առարկայից դուրս:**

Դիմումը վերաբերում է երեք դրվագի, որոնց շրջանակներում դիմում ներկայացրած անձի գնահատմամբ, ի թիվս այլնի, Ն.Փաշինյանը խախտել է Վարքագծի կանոնագրքի 36-37-րդ կետերը:

Հանձնաժողովը նախ արձանագրում է, որ Վարքագծի կանոնագրքի 36-րդ կետը կիրառվում է միայն այն դեպքերում, երբ հանրային պաշտոն զբաղեցնող անձը հանդես է գալիս ի պաշտոնե, ինչի մասին վկայում է հենց կանոնի ձևակերպումը: Մասնավորապես, համաձայն 36-րդ կետի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է **ի պաշտոնե հանդես գալիս՝ ցանկացած իրավիճակում,** ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն:

«Ի պաշտոնե հանդես գալիս՝ ցանկացած իրավիճակում» արտահայտության կետադրությունը վկայում է այն մասին, որ «ի պաշտոնե հանդես գալիս» և «ցանկացած իրավիճակում» արտահայտությունները միմյանց հանդեպ բացահայտիչ-բացահայտյալ հարաբերակցության մեջ: Ըստ այդմ, կանոնը կիրառելի է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից **ի պաշտոն հանդես գալու** ընթացքում առաջացած ցանկացած իրավիճակում:

Մինչդեռ, Ն.Փաշինյանը 2026 թվականի մայիսի 18-ին գտնվել է արձակուրդում, իսկ Դիմումով ներկայացված միջադեպերը տեղի են ունեցել Ազգային ժողովի՝ 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների նախընտրական քարոզչության շրջանակներում: Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ Ն.Փաշինյանը Դիմումով ներկայացված միջադեպերի շրջանակներում հանդես է եկել որպես պատգամավորի թեկնածու և արձակուրդում գտնվելով՝ հանդես չի եկել ի պաշտոնե: Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագրքի 36-րդ կետը չի կարող կիրառվել Դիմումով ներկայացված միջադեպերի շրջանակներում Ն.Փաշինյանի վարքագծի նկատմամբ:

Ինչ վերաբերում է Կանոնագրքի 37-րդ կետին, որով սահմանվում է այլոց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունը, ապա Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում առանձին անդրադառնալ քաղաքացուն ենթադրաբար վիրավորելու վերաբերյալ Դիմումով ներկայացված պնդումներին և քաղաքական հակառակորդների հասցեին հնչեցված խոսքերին, որոնք, ըստ Դիմումի, պարունակել են վիրավորանքներ և սպառնալիքներ:

Այսպես, նկատի ունենալով, որ դիմումներով ներկայացված դեպքերն առնչվում են Ն.Փաշինյանի խոսքի իրավաչափությանը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ սույն դեպքում կարծիքի արտահայտման ազատության սահմաններին:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները

պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ արտահայտման ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից և դրա զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է:

Արտահայտման ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարենպաստ կերպով են ընդունվում կամ դիտարկվում են որպես ոչ վիրավորական կամ արժանանում են անտարբերության, այլ նաև այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք վիրավորում, ապշեցնում կամ անհանգստացնում են: Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»:

Եվրոպական դատարանը նշել է, որ արտահայտման ազատությունը ենթակա է բացառությունների, որոնք, սակայն, պետք է խիստ կերպով մեկնաբանվեն և նման սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատվի:[6]

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության ներքո գերազանցապես ընդգրկվում են կարծիքների արտահայտումը և տեղեկատվության ու գաղափարների տրամադրումն ու ստացումը, որը ներառում է քննադատական արտահայտություններն ու դիտարկումները: Միաժամանակ, խոսքի որոշ դրսևորումներ, ինչպիսիք են անպարկեշտ կամ անվայել արտահայտությունները, գաղափարների արտահայտման տեսանկյունից էական դերակատարում չունեն: Վիրավորական արտահայտությունը կարող է դուրս լինել

[6] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Կարակսոնին և այլոք ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Karácsony and Others v. Hungary[GC]) գործով 2016 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմումներ nos. 42461/13, 44357/13, §132, Ինկալն ընդդեմ Թուրքիայի (ՄՊ) (Incal v. Turkey[GC]) գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, դիմում no. 22678/93, § 46

արտահայտման ազատության պաշտպանության շրջանակից, եթե նման արտահայտության միակ նպատակը վիրավորելն է:[7]

Եվրոպական դատարանը նաև կարևորել է այն հանգամանքը, թե ում դեմ է խոսքն ուղղված: Այսպես, Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ թույլատրելի կամ իրավաչափ քննադատության սահմաններն ավելի լայն են, երբ այն ուղղված է քաղաքական գործիչների, հանրային իշխանության ներկայացուցիչների և հանրային ծառայողների, քան մասնավոր անձանց նկատմամբ:[8]

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի ներքո քաղաքական խոսքի սահմանափակման հնարավորությունը հատկապես նեղ է:[9] Ազատ քաղաքական բանավեճի խթանումը ժողովրդավարական հասարակության կարևոր տարրերից է, և Եվրոպական դատարանը գտնում է, որ նման բանավեճի շրջանակներում արտահայտման ազատությունը բարձրագույն մակարդակի կարևորություն ունի:[10] Եվրոպական դատարանը նաև փաստել է, որ քաղաքական խոսքի կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ քաղաքական բանավեճի իրավաչափ սահմանափակումների շրջանակը նեղ է:[11] Քաղաքական խոսքի լայն սահմանափակումների կիրառումն, անկասկած, անդրադարձ կունենա տվյալ պետությունում արտահայտման ազատության նկատմամբ հարգանքի ընդհանուր մակարդակի վրա:[12] Միաժամանակ, քաղաքական բանավեճի ազատությունն իր բնույթով բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների կամ դրա շրջանակներում հնչեցված տեղեկատվության կամ գաղափարների համար կարող են

---

[7] Տես, օրինակ, Ռուջակն ընդդեմ Խորվաթիայի (Rujak v. Croatua) գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, դիմում no. 57942/10, §§ 27-29

[8] Տես, օրինակ, Չոլակովն ընդդեմ Բուլղարիայի (Cholakov v. Bulgaria) գործով 2013 թվականի հոկտեմբերի 1-ի վճիռը, դիմում no. 20147/06, § 29

[9] Տես, օրինակ, ՆԻՏ Ս.Ռ.Լ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (ՄՊ) (NIT S.R.L. v. the Republic of Moldova [GC]) գործով 2022 թվականի ապրիլի 5-ի վճիռը, դիմում no. 28470/12, § 178

[10] Տես, օրինակ, Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի (Feldek v. Slovakia) գործով 2001 թվականի հուլիսի 12-ի վճիռը, դիմում no. 29032/95, § 83

[11] Տես, օրինակ, Լոմբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 55

[12] Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռ, դիմում no. 10883/05, § 33

սահմանվել պատասխանատվության միջոցներ:[13] Եվրոպական դատարանն ընդգծել է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող (կամ հանրային շահին առնչվող) հարցերով **քաղաքական բանավեճի մասնակցելիս անձինք պետք է չանցնեն այլոց իրավունքների նկատմամբ հարգանքի որոշակի սահմանները:** Միաժամանակ, նման դեպքերում **թույլատրելի է չափազանցության կամ անգամ սադրանքի որոշակի աստիճանը, այսինքն՝ իր արտահայտություններում անձը կարող է որոշ չափով անզսպություն դրսևորել:**[14]

Եվրոպական դատարանը նաև բազմիցս նշել է, որ ժողովրդի ընտրած ներկայացուցիչների, քաղաքական կուսակցությունների և նրանց ակտիվ անդամների արտահայտման ազատությունը հատկապես կարևոր է:[15]

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ **ազատ ընտրությունները և արտահայտման ազատությունը, հատկապես՝ քաղաքական բանավեճի ազատությունը, միասին կազմում են ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնասյունը:** Եվրոպական դատարանը նշել է, որ այս երկու իրավունքները փոխկապակցված են և փոխադարձաբար ամրապնդում են միմյանց. **արտահայտման ազատությունը այն նախապայմաններից մեկն է, որն անհրաժեշտ է օրինաստեղծ մարմնի ընտրության շրջանակներում ընտրողների ազատ կամքի արտահայտման համար:** Այս պատճառով է, որ **ընտրություններին նախորդող շրջանում հատկապես կարևոր է, որ բոլոր տեսակի կարծիքներն ու տեղեկատվությունն ազատ շրջանառվեն**[16]**:** Եվրոպական դատարանը նաև ընդգծել է, որ **ընտրական բանավեճերի տեսանկյունից հատկապես կարևոր նշանակություն ունի թեկնածուների կողմից արտահայտման ազատության իրավունքի անխոչընդոտ իրացումը:** Եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ

---

[13] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 46, Էրբականն ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռը, դիմում no. 59405/00, § 55

[14] Տես, օրինակ, Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 10883/05, § 33

[15] Տես, օրինակ, Սանչեզն ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ) (Sanchez v. France [GC]) գործով 2023 թվականի մայիսի 15-ի վճիռը, դիմում no. 45581/15, § 147

[16] Տես, օրինակ, Օրլովսկայա Իսկրան ընդդեմ Ռուսաստանի (Orlovskaya Iskra v. Russia) գործով 2017 թվականի փետրվարի 21-ի վճիռը, դիմում no. 42911/08, § 110

նախընտրական քարոզչությանը բնորոշ է ընդհանրացման և չափազանցությունների որոշակի աստիճանը:[17]

Հանձնաժողովն արձանագրում է, որ նախընտրական շրջանում Կանոնագրքով նախատեսված վարքագծի կանոնների մեկնաբանության նկատմամբ ևս պետք է կիրառելի լինեն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով ամրագրված վերոգրյալ չափանիշները: Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ նախընտրական շրջանում ընտրություններին մասնակցող կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի անդամ հանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի խոսքը Կանոնագրքի տեսանկյունից կարող է ոչ իրավաչափ համարվել միայն բացառիկ դեպքերում՝ երաշխավորելու համար նախընտրական շրջանում տարատեսակ կարծիքների ազատ արտահայտումն ու շրջանառությունը, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձ չհանդիսացող քաղաքական գործիչների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ նախընտրական շրջանում հնարավորինս միատեսակ կանոնների կիրառելիությունը:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ խոսքային վարքագծի առնչությամբ նախընտրական շրջանում Կանոնագրքի 37-րդ կանոնի առերևույթ խախտում կարող է արձանագրվել միայն այն դեպքում, երբ հանրային պաշտոն զբաղեցնող անձը կատարել է այնպիսի արտահայտություններ, որոնք ողջամտորեն կարող են հանգեցնել հանրային իշխանության հեղինակազրկման: Հանձնաժողովը, մասնավորապես, գտնում է, որ նման խոսքի դրսևորումներ կարող են համարվել գռեհկաբանությունները, հայհոյախոսությունները, բռնության կոչ, սպառնալիք կամ արդարացում պարունակող խոսքը, ինչպես նաև ազգության, ռասայի, կրոնական պատկանելիության, սեռի, տարիքի, առողջության և այլ անձնական կամ սոցիալական բնույթի հատկանիշի հիմքով ատելություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրող խոսքը:

Վերոգրյալի համատեքստում քննարկելով Դիմումով ներկայացված 1-ին դրվագի, մասնավորապես՝ քաղաքացու հետ երկխոսության շրջանակներում

[17] Տես Կուդեշկինան ընդդեմ Ռուսաստանի (Kudeshkina v. Russia) գործով 2009 թվականի փետրվարի 26-ի վճիռը, դիմում no. 29492/05, §§ 87, 95

Ն.Փաշինյանի վարքագիծը՝ քաղաքացու պատվի և արժանապատվության նկատմամբ հարգանքի համատեքստում՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նախ արձանագրել, որ քաղաքացին նախընտրական քարոզչության շրջանակներում, մոտենալով Ն.Փաշինյանին, նրա հասցեին քննադատական խոսք է հնչեցրել, ինչին Ն.Փաշինյանն արձագանքել է:

Այսպես, քաղաքացին նշել է, որ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը գողացել է իր հայրենիքը, շարունակում է գողանալ իր հայրենիքը, իր ազգի մի ամբողջ երիտասարդ սերունդ է ոչնչացրել, գողացել է իր երեխեքին, իր եղբորը, իր ուրախությունը, այնուհետև հարցրել է՝ արդյոք ՀՀ վարչապետը գիտի, թե քանի բարձրաստիճան սպա է անհայտ կորած, այնուհետև՝ արձագանքելով Ն.Փաշինյանի արձագանքին, նշել է՝ որ նա չգիտի այդ անձանց թիվը և ստում է: Քաղաքացին նաև Ն.Փաշինյանին մեղադրել է «մեզ կոտորելու», կզացնել փորձելու, երկիրը քանդելու մեջ:

Ըստ այդմ, Հանձնաժողովի գնահատմամբ, քաղաքացին հնչեցրել է իր քննադատությունը և գնահատականները հանրային հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի վերաբերյալ, այդ թվում՝ ղարաբաղյան հակամարտության, դրա շրջանակներում ՀՀ իշխանությունների վարած արտաքին և ներքին քաղաքականության, անհայտ կորած անձանց վերաբերյալ:

Վերոգրյալից ելնելով՝ թեև քաղաքացին հասարակական կամ քաղաքական գործիչ չէ և մասնավոր անձ է, սակայն Հանձնաժողովը քաղաքացու հետ Ն.Փաշինյանի վիճաբանությունը դիտարկում է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ բանավեճի և ոչ թե պարզապես մասնավոր զրույցի համատեքստում:

Դիմումով նշվել է, որ Ն.Փաշինյանը վիրավորել է քաղաքացուն, այնուամենայնիվ, Հանձնաժողովի գնահատմամբ, չեն վկայակոչվել արտահայտություններ, որոնք Ն.Փաշինյանը հնչեցրել է քաղաքացու հասցեին, այլ միայն հիշատակվել են քաղաքական հակառակորդների հասցեին հնչեցված արտահայտությունները: «YouTube» սոցիալական ցանցի՝ «24TV» ալիքով 2026 թվականի մայիսի 18-ին հրապարակված՝ «Քաղաքացին շշպռեց Փաշինյանին. «Գողացել եք հայրենիքս, մի ողջ երիտասարդ սերունդ եք ոչնչացրել»»

վերտառությամբ տեսանյութի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ն.Փաշինյանի կողմից քաղաքացու հետ վիճաբանության շրջանակներում հնչեցված գնահատականների զգալի մասը կատարվել է Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի, Սամվել Կարապետյանի և Գագիկ Ծառուկյանի հասցեին (օրինակ՝ «Ռոբին էլ եմ կզացնելու, Սերժին էլ եմ կզացնելու, կալուգացուն էլ եմ կզացնելու, Գագոյին էլ»:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ հենց քաղաքացու հասցեին հնչեցված միակ արտահայտությունները հետևյալն են՝ «ողորմելին դուք եք», «*դուք եք կզել, դուք եք կզել, փախել եք, փախել եք»:* Ընդ որում, երկու դեպքում էլ համապատասխան արտահայտությունները կատարվել են՝ նույնապես կրկնելով քաղաքացու կողմից Ն.Փաշինյանի հասցեին գործածված արտահայտությունները: Այսպես, քաղաքացին հարցնում է՝ ութ տարի ա, ութ տարի ա՝ ինչո՞վ էիր զբաղված, այ ողորմելիներ, ինչին ի պատասխան՝ Ն.Փաշինյանը նշում է՝ ողորմելին դուք եք:

Նմանապես, երբ քաղաքացին Ն.Փաշինյանին մեղադրում է «թուրքի առաջ կզած» լինելու մեջ, Ն.Փաշինյանը պատասխանում է՝ դուք եք կզել, դուք եք կզել, փախել եք, փախել եք: 2024 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 10/2024-Վ/Վ եզրակացությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ զսպվածություն ցուցաբերելու պարտականությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ բացառվի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ցանկացած իրադրությունում բուռն արձագանքը, անգամ այն պարագայում, երբ նրանց հասցեին լարված իրավիճակում շարունակաբար հնչում են վիրավորական արտահայտություններ:

Ըստ այդմ, նկատի ունենալով, որ Ն.Փաշինյանը քաղաքացու հասցեին հնչեցրած միակ խոսքերը կատարել է՝ ի պատասխան քաղաքացու կողմից նույն բառերի կիրառման, հաշվի առնելով, որ քաղաքացին մինչ այդ շարունակաբար կոշտ քննադատություններ է հնչեցրել Ն.Փաշինյանի հասցեին, այդ թվում՝ նշել, որ ատում է նրան և կոչել թշնամի՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ն.Փաշինյանի կողմից վերոգրյալ արտահայտությունների կիրառումը չի հատել իրավաչափության սահմանը:

Հանձնաժողովը նաև ընդգծում է, որ թեև Ն.Փաշինյանի խոսքի մի մասը եղել է բարձրատոն, այն տոնային առումով համարժեք է եղել քաղաքացու խոսքին: Այսպես,

վիճաբանությունը երկուստեք տարվել է բարձրատոն կերպով, ընդ որում, դա որոշակիորեն պայմանավորված է եղել նաև նրանով, որ ներկա գտնվող այլ անձինք արձագանքել են վիճաբանությանը աղմկելով, ուստի Ն.Փաշինյանը և քաղաքացին, արձագանքելով այդ իրողությանը, ևս ավելի բարձր տոնայնությամբ են շարունակել վիճաբանությունը, որը սկսվել էր ավելի հանգիստ տոնով:

Անդրադառնալով Ն.Փաշինյանի գործածած՝ «Եթե դուք Ռոբն եք, մենք ձեզ կզացնելու ենք: Եթե դուք Ռոբն եք, Ռոբին էլ եմ կզացնելու, կալուգացուն էլ եմ կզացնելու, Գագոյին էլ եմ կզացնելու, Սերժին էլ եմ կզացնելու» արտահայտությանը՝ Հանձնաժողովը գտնում է, որ նշված խոսքերը պետք է դիտարկվեն ոչ թե առանձին՝ միայն բառերի իմաստաբանական վերլուծություն կատարելով, այլ քաղաքացու և Ն.Փաշինյանի՝ նշված խոսքերին նախորդած երկխոսության համատեքստում:

Այսպես, քաղաքացին ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանին մեղադրել է պետությունը քանդելու մեջ, ինչին ի պատասխան Ն.Փաշինյանը հարցրել է՝ ի՞նչն եմ քանդում: Նշված հարցին արձագանքելով՝ քաղաքացին նշել է. «Ուրեմն, Դուք, **Դուք մեզ փորձեցիք կզացնել, մենք չենք կզել:**»:

Այս խոսքերին արձագանքելով է, որ Ն.Փաշինյանը նախ հարցրել է՝ Դուք ո՞վ է, ապա շարունակել է, որ եթե դուք (այսինքն՝ նրանք, ում, քաղաքացու պնդմամբ, Ն.Փաշինյանը փորձել է կզացնել) Ռոբն եք, Ռոբին կզացնելու եմ:

Հանձնաժողովը, ըստ այդմ, գտնում է, որ նշված խոսքերը կատարվել են ոչ թե քաղաքացուն անձնապես վիրավորելու, նրան «կզացնել սպառնալու» նպատակով, այլ ուղղված են եղել Ն.Փաշինյանի քաղաքական հակառակորդներին: Հանձնաժողովը գտնում է, որ քանի որ վիճաբանությունն ընթանում էր հենց քաղաքացու հետ և վերոնշյալ արտահայտությունը հնչել է՝ արձագանքելով քաղաքացու խոսքին, ողջամտորեն կարող էր հանրային ընկալում ձևավորվել, որ նշված արտահայտությունները հասցեագրված էին հենց քաղաքացուն: Այնուամենայնիվ, ինչպես նշվեց, Ն.Փաշինյանի կատարած արտահայտությունների բովանդակության, նրա ամբողջ խոսքի և քաղաքացու խոսքի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Ն.Փաշինյանի վերոգրյալ արտահայտություններն ուղղված են եղել ընդդիմադիր քաղաքական ուժերի ղեկավարներին և ոչ թե քաղաքացուն:

Հանձնաժողովը կարևորում է այն հանգամանքը, որ 2026 թվականի մայիսի 14-ին նախընտրական քարոզչության շրջանակներում, քննադատելով Ն.Փաշինյանին, Ռոբերտ Քոչարյանը նշել է, որ նա ատում է բոլոր պայքարող կերպարներին՝ ասելով. **կզացած մարդը ավելի շատ ատում է ոչ թե նրան, ով իրան կզցրել ա, ատում է նրանց, ով չի կզացել:**

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ Ն.Փաշինյանը քաղաքացու գործածած արտահայտությունը ողջամտորեն կարող էր ընկալել՝ որպես Ռ.Քոչարյանի հնչեցրած վերոգրյալ պնդման կրկնում, ինչից ելնելով էլ՝ նա նշել է՝ որ եթե քաղաքացու նշած «չկզած» անձանց ներքո նկատի է առնվում Ռոբերտ Քոչարյանը, ապա «Ռոբին կզացնելու է»: Նշված արտահայտությունը ՀՀ վարչապետի կողմից վիճաբանության ընթացքում բազմիցս կրկնվել է՝ հասցեագրելով նաև Սերժ Սարգսյանի, Գագիկ Ծառուկյանի և Սամվել Կարապետյանի հասցեին: Նույն համատեքստում կիրառվել է նաև «չոքացնել» բառը:

Անդրադառնալով նշված բառերի նշանակությանը՝ Հանձնաժողովը հարկ է համարում նկատել, որ «կզացնել» բառն իր ուղիղ իմաստով նշանակում է «կուզ կենալ, ներքև ծռվել մարմնով, մէջքը կորացնել» (Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, 1944, էջ 1065): Բառը փոխաբերական իմաստով նշանակում է ինչ-որ մեկին ստիպողաբար ենթարկեցնել, նվաստացնել, հնազանդեցնել, կոտրել դիմադրությունը: «Չոքացնել» բառը նշանակում է «չոքել տալ», «ծնկի բերել» (Արդի հայերենի բացատրական բառարան, Էդուարդ Աղայան, Երևան, 1976): Գործողությունը առաջներում հանդիսացել է պատժի տեսակ (Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, 1944, էջ 1794): Քաղաքական-խոսակցական լեզվում գործածվում է որպես հակառակորդին կամ ընդդիմախոսին ծնկի բերելու, նվաստացնելու կամ ճնշելու փոխաբերական իմաստով:

Հանձնաժողովը գտնում է, որ նշված արտահայտություններն ունեն կոշտ բնույթ և կարող են այդ թվում առերևույթ կերպով վիրավորական համարվել: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը գտնում է, որ դրանց կիրառումը չի հանգեցրել Կանոնագրքի 37-րդ կետի առերևույթ խախտման՝ հետևյալ հանգամանքները հաշվի առնելով՝

1) այդ արտահայտություններն ի սկզբանե գործածվել են Ռ.Քոչարյանի կողմից՝ Ն.Փաշինյանի հասցեին ուղղված քննադատության համատեքստում,

2) Դիմումով ներկայացված առաջին միջադեպի շրջանակներում ՀՀ վարչապետը նշված արտահայտությունները կատարել է՝ պատասխանելով քաղաքացուն և գործածելով հենց քաղաքացու կողմից կիրառված նույն բառը,

3) արտահայտությունները, թեև իրենց կոշտ բնույթին, անձնական վիրավորանք չեն կարող համարվել, քանի որ չեն բնութագրում անձին, իսկ Կանոնագրքի 37-րդ կետը վերաբերում է ոչ թե պարզապես բարեվարքության դրսևորմանը, այլ ավելի նեղ իմաստով՝ անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելուն,

4) արտահայտությունները կատարվել են նախընտրական քարոզչության շրջանակներում, երբ կարծիքի արտահայտման ազատության սահմանները հատկապես լայն են և ուղղված են եղել այլ քաղաքական գործիչների, որոնք պետք է առավել բարձր հանդուրժողականություն դրսևորեն կոշտ քննադատության, չափազանցությունների, սադրիչ խոսքի նկատմամբ, հատկապես երբ իրենք ևս կատարել են նմանաբնույթ արտահայտություններ,

5) թեև իրենց կոշտ բնույթին, արտահայտությունները չեն պարունակել գռեհկաբանություն, հայհոյախոսություն կամ ատելության խոսք:

Անդրադառնալով սույն որոշման 1.4-րդ կետով նշված՝ Ն.Փաշինյանի ելույթին, որի ընթացքում, ըստ Դիմումի, նա հնչեցրել է բազմաթիվ վիրավորական արտահայտություններ և վերջում հավելել, որ դրանք ուղղված են Ռոբին, Սերժին, Կալուգացուն և Գագոյին՝ Հանձնաժողովը նախ «YouTube» սոցիալական ցանցի՝ «24TV» ալիքով 2026 թվականի մայիսի 18-ին հրապարակված՝ «Փաշինյանը լարվեց և կրկին սպառնաց ընդդիմությանը. «Նորից մի զույգ բոթասի մակարդակի եք հասնելու»» վերտառությամբ տեսանյութի ուսումնասիրությամբ արձանագրում է, որ նշված ելույթի շրջանակներում Ն.Փաշինյանի խոսքի զգալի մասն ուղղված է եղել սույն որոշման 2.6-րդ կետով վկայակոչված տեսանյութը նկարահանած դիմակավորված անձանց: Այնուամենայնիվ, հնչեցված խոսքի մի մասը հասցեագրվում է նաև Դիմումով վկայակոչված՝ ընդդիմադիր քաղաքական ուժերի առաջնորդներին:

Այսպես, Ն.Փաշինյանը նշում է. «*Էդ մասկեքով սպահակներին ես ասում եմ՝ ձեր մասկեքը, այ համբալներ, դուք մեր երեխեքին դիրքերում մենակ թողել եք, փախել, պականքներ, սպահակներ, ես ձեր մասկեքը հանելու եմ ու ձեր մասկեքը մտցնելու եմ ձեր համապատասխան տեղերը, համբալի լակոտներ:* ***Ռոբերտ, քեզ եմ ասում, Սերժ, քեզ եմ ասում, կալուգացի, քեզ եմ ասում, Գագո, քեզ եմ ասում:*** *Մի հատ կամերայի դեմից էն կողմ գնացեք: (...) Դուք հիմա էլ եկել եք, ուզում եք Ղարաբաղի ժողովրդի նման Հայաստանի ժողովրդին սպրկացնե՞ք: Գլուխներդ պատին եք տվել: Հատ-հատ, մասկեքներդ հանելու եմ և մտցնելու եմ ձեր համապատասխան տեղերը: Հատ-հատ, Ռոբից սկսած: Ռոբն էլ կարա էսօրվանից մասկա հագնի, Սերժն էլ, կալուգացին էլ, Գագոն էլ: Մասկա հագեք: Որովհետև դուք երազելու եք Հայաստանից փախնելու հնարավորության մասին, դուք չեք փախնելու, դուք չոքելու եք Հայաստանի ժողովրդի առաջ և պատասխան եք տալու Հայաստանը իբր Ղարաբաղի անվան տակ, իբր Ղարաբաղի համար ծախելու համար: Ղարաբաղը դուք էն գլխից եք ծախած եղել, ձեզ համար Ղարաբաղի ժողովուրդը պատանդ ա եղել, Ղարաբաղը պատանդ ա եղել, որ Հայաստանը էդ ծխածածկույթի տակ թալանեք: Եվ մենք էսօր էդ թալանածը հետ ենք բերել և մինչև վերջ հետ ենք բերելու: Ռոբիկ, Սերժիկ և մյուսներ: Ոնց 90-ականների թվին մի զույգ բոթասով եղել եք, տենց էլ ես ձեզ հասցնելու եմ մի զույգ բոթասի մակարդակի, մի զույգ բոթասի մակարդակի:»:*

Հանձնաժողովը գտնում է, որ նշված խոսքն առավելապես նպատակ ունի քննադատելու վերոնշյալ տեսանյութի նկարահանումը և շեշտելու, որ այն նկարահանող անձինք պատասխանատվության են ենթարկվելու: Միաժամանակ, Ն.Փաշինյանը նշված տեսանյութի նկարահանումն ու տարածումն առերևույթ կերպով վերագրում է նաև քաղաքական ընդդիմությանը կամ նույնացնում է ընդդիմությանը նշված տեսանյութում նկարահանված անձանց հետ՝ վերջիններիս հասցեին հնչեցրած մեղադրանքները վերագրելի համարելով նաև ընդդիմադիր քաղաքական ուժերի ղեկավարների նկատմամբ և հակառակը:

Հանձնաժողովը գտնում է, որ նշված խոսքի շրջանակներում Ն.Փաշինյանի կողմից գործածված մի շարք արտահայտություններ, թեև իրենց կոպիտ բնույթին, կրել են քննադատական բնույթ: Այսպես, օրինակ, ՀՀ վարչապետը մեղադրել է

քաղաքական հակառակորդներին «Հայաստանը իբր Ղարաբաղի անվան տակ, իբր Ղարաբաղի համար ծախելու», Ղարաբաղի ժողովրդին պատանդ պահելու մեջ, որոնք ՀՀ երկրորդ և երրորդ նախագահների կառավարման վերաբերյալ քննադատական դատողություններ են: Նմանապես, Ն.Փաշինյանը նրանց, ըստ էության, մեղադրել է ապօրինի հարստացման մեջ՝ նշելով, որ իրենց թալանածը հետ են բերել և մինչև վերջ հետ են բերելու և խոստանալով, որ նրանց «հասցնելու է մի զույգ բոթասի մակարդակի», ինչպիսի մակարդակին, Ն.Փաշինյանի գնահատմամբ, նրանք եղել են 90-ականներին՝ մինչև իշխանության անցնելը:

Հանձնաժողովը, ըստ այդմ, արձանագրում է, որ վերոգրյալ խոսքը չի հատել քաղաքական բանավեճի շրջանակներում թույլատրելի քննադատության սահմանը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Ն.Փաշինյանի կողմից գործածված մի շարք արտահայտություններ առերևույթ վիրավորական բնույթ են կրել: Այնուամենայնիվ, այս առնչությամբ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում վերահաստատել թիվ 17/2026/Վ/Վ որոշմամբ արտահայտած դիրքորոշումն առ այն, որ նախընտրական շրջանում կարծիքի արտահայտման ազատության սահմանները, հատկապես՝ ընտրություններին մասնակցող թեկնածուի կամ կուսակցության անդամի կարծիքի արտահայտման ազատության սահմանները, հատկապես լայն են, և Կանոնագրքի առերևույթ խախտման առկայություն կարող է արձանագրվել միայն բացառիկ դեպքերում: Այլ խոսքերով, վարքագիծը, որն այլ պայմաններում կարող է դիտարկվել որպես Կանոնագրքի դրույթներին ոչ համապատասխան, նախընտրական շրջանում կարող է իրավաչափ դիտվել:

Հանձնաժողովը կրկին արձանագրում է, որ քաղաքական բանավեճի շրջանակներում, առավել ևս՝ նախընտրական շրջանում հնչեցվող խոսքին հատուկ է չափազանցությունների, ընդհանրական դատողությունների, անգամ ցնցող, ապշեցնող արտահայտությունների կիրառումը: Հանձնաժողովը կարևորում է այն հանգամանքը, որ Ն.Փաշինյանի խոսքի առաջնային նպատակը եղել է դիմակավորված անձանց և քաղաքական հակառակորդներին քննադատելը, ընդ որում, նկատի ունենալով, որ Ն.Փաշինյանի խոսքն առաջին հերթին կատարվել է՝ ի պատասխան դիմակավորված անձանց հրապարակված տեսանյութի՝ Հանձնաժողովը

նաև կարևորում է, որ նշված տեսանյութով դիմակավորված անձանց կողմից Ն.Փաշինյանի հասցեին ևս կիրառվել են վիրավորական արտահայտություններ («ինքը սուկա ա»), որոնց համատեքստում վերոգրյալ ելույթի շրջանակներում Ն.Փաշինյանի կիրառած վիրավորանքները, Հանձնաժողովի գնահատմամբ, համարժեք են:

Հանձնաժողովը նաև գտնում է, որ կիրառված արտահայտությունները, չնայած առերևույթ վիրավորական բնույթին, չեն հատել գռեհկաբանություն կամ հայհոյախոսություն լինելու սահմանը: Վերոգրյալից ելնելով և առաջնորդվելով նախընտրական շրջանում տարաբնույթ կարծիք արտահայտումը և շրջանառումը երաշխավորելու անհրաժեշտությամբ, որը հիմնաքարային նշանակություն ունի ժողովրդավարական հասարակությունում՝ Հանձնաժողովը եզրահանգում է, որ Ն.Փաշինյանի խոսքը չի հատել իրավաչափության սահմանը:

Ինչ վերաբերում է Դիմումով նշված այն պնդմանը, որ Ն.Փաշինյանի խոսքը պարունակել է սպառնալիքներ, Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

«168.am» լրատվական կայքի՝ 2026 թվականի մայիսի 18-ի՝ «Այո, ֆիզիկական սպառնալիք ա, պոլերին ենք տալու, սատկացնելու ենք. Փաշինյանը չի հանդարտվում» վերտառությամբ հրապարակման ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ հրապարակմամբ ներկայացված տեսանյութում լրագրողների հարցին առ այն՝ արդյոք իր խոսքերն ընդդիմությանը ուղղված սպառնալիք են՝ Ն.Փաշինյանը նշում է, որ քանի որ ընդդիմության ներկայացուցիչները հանցանքների ակնհայտ մասնակիցներ են, նա ասում է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և որպես ժողովրդի մանդատ ունեցող անձ՝ կոնկրետ անձանց սպառնում է, որ նրանք նստելու են և պետք է նստեն: Մեկ այլ լրագրողի հարցին առ այն՝ արդյոք այդ խոսքերը ֆիզիկական բռնության սպառնալիք են, Ն.Փաշինյանը պատասխանում է՝ չէ, չէ, այնուհետև նշում, որ ֆիզիկական սպառնալիք դա կարող է համարվել միայն դիմակավորված անձանց դեպքում:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ն.Փաշինյանի՝ քաղաքական հակառակորդներին կզացնելու, չոքացնելու, սատկացնելու վերաբերել կատարած արտահայտությունները վերաբերում են ոչ թե նրանց նկատմամբ ֆիզիկական բռնության կիրառմանը, այլ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության

ենթարկվելուն: Հանձնաժողովը գտնում է, որ թեև իրավական պատասխանատվության կիրառումն Ազգային ժողովի կամ Կառավարության լիազորությունների շրջանակից դուրս է, այնուամենայնիվ, համապատասխան պատասխանատվության միջոցները, դրանք գործարկելու ընթացակարգերը նախատեսվում են օրենսդրությամբ, իսկ դատական և իրավական ոլորտների բարեփոխումներն իրականացվում են Կառավարության կողմից, ուստի նախընտրական քարոզչության շրջանակներում քաղաքական ուժերը կարող են նաև անդրադառնալ այս հարցերին:

Հանձնաժողովը կրկին ընդգծում է, որ սահմանափակված լինելով Դիմումի առարկայով՝ քննարկում է միայն քաղաքական հակառակորդների հասցեին հնչեցված խոսքի իրավաչափությունը: Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ Ն.Փաշինյանի խոսքն այս տեսանկյունից ևս չի հատել իրավաչափության սահմանը, քանի որ այն չի պարունակել ֆիզիկական բռնություն կիրառելու սպառնալիք:

Ինչ վերաբերում է Դիմում վկայակոչված՝ Կանոնագրքի 61-62-րդ կետերին, որոնք առնչվում են քաղաքական զսպվածության պահպանմանը, Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում Ն.Փաշինյանի վարքագիծը չի պարունակում նաև նշված կանոնների առերևույթ խախտման հատկանիշներ: Այսպես, Կանոնագրքի 61-րդ կետով սահմանվում է այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների՝ քաղաքական չեզոքություն և քաղաքական զսպվածություն դրսևորելու օրենսդրական պարտականությունը հարգելու պահանջ, մինչդեռ Ն.Փաշինյանի խոսքը որևէ կերպ չի անդրադարձել այլ պաշտոնատար անձանց վարքագծին՝ քաղաքական զսպվածության կամ չեզոքության համատեքստում:

Կանոնագրքի 62-րդ կետով սահմանվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի պարտականությունը՝ ընտրությունների ժամանակ պահպանելու նախընտրական քարոզչության պահանջները, ինչպես նաև չօգտագործելու հանրային ռեսուրսներն իր, այլ անձանց կամ քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի համար: Հանձնաժողովը գտնում է, որ Դիմումով չեն վկայակոչվել այնպիսի հանգամանքներ, որոնք կվկայեին Ն.Փաշինյանի կողմից նախընտրական

քարոզչության պահանջները խախտելու կամ հանրային ռեսուրսները նախընտրական քարոզարշավի համար օգտագործելու մասին:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 27-րդ հոդվածով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ավետիք Չալաբյանի կողմից 2026 թվականի մայիսի 19-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:
2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Ավետիք Չալաբյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ